




Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

ՀԱՐ - ԲՈՆ

ՆԱԻՐԻ ՔՈՒԶՍ

Պ Ո Ե Ս

891.99

Ե-29

19 NOV 2011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԱԾՈՒԹՅԱՆ ՄԻՋՆԵՐ

891-95
6-29


h.m.

ՃԱԻ-ԲՈՆ

Ն Ա Ի Բ Ի =
= Գ Ո Ի Զ Ա

1753
1008
38457

19 Թ Ի Ֆ Լ Ի Ս 25



17291
13 JUL 2013

ՆԱԻՐԻ ՔՈՒՉԱ

3

ՆԱԻՐԻ, ՅԵՐԿՍ ՎՈՂՋ ՆԱԽԵՐԳԱՆԲ ՊՈԵՄՆԵՐԻՏ

Կանգնած ես, ջահել ես վառվռուն,
Նաիրի, որերի հաղթական պատանի,
ջահել ես, Մասիսը կայրես.
Կը վառվես Զանգուի շրթերուն,
շրթերդ շիթերը ջրերի,

ոջախիդ յերգը կը տանի...

Նաիրի, Հայաստան, դո՛ւ յես,
ու տիտան ես հիմի.—դիկատառը

քայլերթում,

Մասիսը ճակատիտ ե փարոս,

Մասիսը Հոկտեմբերյան արձագանք

կը կրես,—

Մոսկովը կա քո մեջ՝ դու կաս Մոսկովի սրտում:

Զանգուն հինորյա ծերացած մի ճանփա՝

Զանգուն ե քեզ, քո անցած ցավերիդ որորան,—

հիմա, թող թափը ձեռքիդ իջնի,

թափը բազուկիտ—Ֆիլտրը

Նաիրյան կարմիր որի.

Главлит № 348

Тифлис

Тираж 1000

Թիֆլիս Ժ. Տ. Գ. Խ. Պոլիգր. բաժնի 4-րդ սպ., Պուշկ. փող. № 3.



Զանգիյում կը ցամքի ա ր ց ու ն ք ը, —
 դարը քո մլաված,
 մլաված դարը քո, —
 մշուշված Զանգիյում:

Հիմա զրընգն, գնն թող, հոսի —
 խոսի թող Զանգուն
 հազարի քրաինք գեմքերից,
 լուսի թող Նաիրին
 ելեկարոտով ալիքով վազի,
 իր հինորյա ապառաժոտ քարերից:

1. ՆԱԻՐԻ ԳՈՒՉԱՆ ՅԵՐԵԿ

Յերեկ Նաիրեցի Ավոն
 ծերացած հազոտ մի ծերուկ,
 Նաիրի քուչովն եր. — կերթար անքան, անտի.
 յեղած ճանփերի փոշուց,
 դանդաղ քայլերի թափով,
 գնում եր փոքրիկ մի կրպակ...
 Գնում եր ծերացած Ավոն՝
 քուչի մի փոքրիկ կրպակ —
 գներ մի շահուբունութի, ...
 «Փալաք» փնթփնթար ու ծխեր պատի տակ
 արևոտ որին, — նայեր արևոտ քուչային:

Քուչան արև եր ու վառ՝
 Նաիրին — Ավն ալեհեր.
 արյունը դանդաղ կը սողար
 յերկիրը կը մեռներ, կը մեռներ:
 Քուչան չարչի եր որեցոր,
 յերկիրը — Ավո, բուննութի,
 դանդաղ թե յերեկ, թե այսօր,
 կը ծախվեր զուլթի, առ զուլթի...

2. ԳՈՒՉԱՆ ԱՐԲԱՆ

Ավոն արևի տակին,
 դեմքին կնճիռներ հազար,
 անցած որերը «Շահել» —
 կը հիշեր, կը հիշեր կը հազար:
 Յերբ խանձված Նաիրյան քուչով,
 կանցներ ինքը «Նաիրցին»
 ձեռքին պապական մի թաղբե. —
 ձեռք, — վոր արգելք եր ու մահ,
 արգելք, հազարի հացին:

Հիշում եր... թե ինչպես գնացին,
 անցան ու ինքը մշուշվեց.
 թե ինչպես հեքիաթներ թվացին,
 և ինչո՞ւ «մի անկախ Հայաստան»

շուշի պես փշրվեց, փշրվեց...
 Գոնե իր վորդու «աշխարում»,
 շեն եր ոջախը Ավոյի,
 կապերը «մեղիքի» որերում ու կասեր՝
 — Քյասիրը նաիրյան, ջրհանդամ թող նախ,
 թող նախ:
 Որերը դեղին բաղդի հետ,
 որերը թալանի յերազով—
 կորոճար Ավոն զառամած,
 աչքերից կարցունքեր վռազով:

*
 * *

— Չե՞ վոր իր տղան խմբապետ,
 արյունով գյուղեր առավ,—
 ...չե՞ վոր մոխիրներ մնացին
 չե՞ վոր հազարներ մեռան:
 Հաղթական մոխիրը գյուղերի
 խմբապետ վորդու առաջից,
 քամիյով հաղթանակ կը յերգեր
 կը վազեր Նաիրյան քուչից:
 — Յերբ յեղավ «անկախ Հայաստան»
 Ավոն ել մահուկեր ուզեց...
 — ազգային խորհուրդից վոր տան...
 պարծեցավ, թալանով հուզվեց:

Չե՞ վոր աշխարհը միայն կը դողար, կը դողար կը հուզվեր,
 յերբ խմբապետ վորդին, կաղոթեր — մահուկեր, մահուկեր...
 — Ինչպես շուտ փոխվեց ու անցավ...
 Ինչպես եր... ինքն ել չիմացավ:

կորցրին «անկախ» Նաիրի,
 վորին սիրում եր Ավոն,—
 շիվանը մոխիրած գյուղերի,
 հազար գաղթական Սիմոն...
 — Կը հիշեր,—
 թե ինչպես Նաիրի քուչան
 լեցուն եր, մարդիկ եր ուսել,—
 շալկել եր չարչի, ու հայդուկ,
 շալկել եր թողը փողոցի,
 դեմքին եր թե մարդ՝
 թե սել...

— Չե՞ վոր, ճիշտ միևնույն քուչով
 կանցներ ինքը նաիրցին,
 ձեռքին պապական մի թագբե,
 ձեռքը՝ վոր արգելք եր ու մահ,
 արգելք — հազարի հացին:

3. ՉԱՅՉԻ ՀԱՍԱՆԸ

Ավոյի մտածած քուչայով
 ուր կար հայդուկ ու չարչի.—
 Դոկ մի իրանցի կար — «Մաշադի»-ն չայով,
 չուղեցին քուչայում կանչի
 «սի չայ... սի չայ...»:

Լքված Հասանը տխուր,
 փողոցի գորշացած փողիցում,
 Նաիրից հեռու, հեռուն թողած
 յերկիրը պատմական մի Իրան,—
 յերկիր, ուր հազար, ու հազար իր նման
 կիսամեռ ստրուկ ունի—
 խլինքոտ շահերի հինացած
 վտառներն են շոյում...
 Յերկիր, վոր զայրույթ ե տվել
 Հասանին,—
 Իրանցի մի տիտան ե կալանած,
 կալանած ե յեղբայրը՝ Ալին:
 Հասանը տարագիր,—
 առտ եր առել տխուր Նաիրյան մի քուչի,
 ու ձեռքին—բախտերի խորհորդով,
 բռնած եր մի մեծ աման,
 փողոցից փողոց, քուչաներից բոլոր
 կանցներ Հասանը, կը կանչեր,
 կը կանչեր Իրանի հսկան
 արևելքի քաղցր մեղլամաղձ նվագով—
 ամեն որ, «չա՛յ՛յ, ա՛ չա՛յ՛յ...»
 Յերկիրը, իր ոջախը, հեռավոր մի գյուղ,
 լռած—Իրանցի փաշայի կախով,
 ոջախը քանդված եր նրա,
 ոջախը դարձել եր անծուխ—
 պապերը Հասանի մեռել էյին,
 նրանց արյուն-հինայած ձեռքերով:

ԱԶԳԱՅԻՆ ԽՄՈՐ

Ձայչի Հասանն ել փախավ,
 թքեց Նաիրի քուչին,
 յերբ փոշոտ չուխուռ Հագոն
 պարծեցավ ճանփի միջին:
 Հասանը դարձավ Իրան,
 դարձավ յերկիրը շեմսի—
 դարձավ Նաիրից վերավոր,
 ուղեց կռիվ «չըլինի»:
 Մշուշվեց ու սրվեց,
 դատարկվեց Նաիրին—ու լռեց..
 հետո կամավոր գրվեցին
 չարչին, հայդուկը քուչի,
 ուղեցին Իրանն ու Անատոլ.—
 այսինքն «մաշադի» չայչին,
 չը կանչի,
 չը կանչի...
 Ամեն ինչ առակ դարձավ,
 թե վորդին Ալոյի—խմբապետ,
 ու թե մաուզեր հողին,—
 յերկիրը քամվեց, նոսրացավ
 խեղկատակ ջարդերի տակին...

4. ԱՐՅՈՒՆՆԵՐ, ՏԱՐԻՆՆԵՐ ԱՆՑԱՆ

Անհույս ու ախուր յերկիր,—
 փողոցը Ձանգունի,
 Ձանգուն, վոր քանդված
 խյուղերն եր լիզում—
 զիզում եր իր մեջքին,
 մշուշվում Նաիրի լալկան առույին.
 անուրջը—
 մի հոգնած պոետի յերգն եր,
 վոր կռիվներից հեռո
 մորթված մարդկանց
 քուչին եր սաղում...
 Ինչո՞ւ եր միայն անգունյն
 փռչի,
 փռչին վոր ահեղ թռիչքով
 դարձավ հսկա մի սրմերձ,—
 հիվանդ Նաիրին ճնշվեց,
 ճնշվեց փռչու ափում:
 Յերկիրը գանգաղ հոսացող,
 յերկիր, վոր Ավոյի որերում,
 դարձել եր տկար, լացող,—
 բուռամբոխ զանգին որորեց
 ուզեց ամբողջ քուչան Նաիրի,
 հողախառ մի դաշտ դառնա,
 վոր ինքը վարի,
 վարի:

Վարի իր պապական վոտքերով,
 յերկիրը, արևոտ գետին,—
 քնչ կա, հազարներ թող մեռնեն,
 ազգային մեծ կռիվ թող լինի,
 վողբա Մասիսը

ու—

Ձանգուն,
 պոետը՝ լալկան, հետին:
 Ավոն ել հինորյա կատակ
 Ավոն Նաիրյան զանգին,—
 արևելքի դռներում,
 ինքն ել փողոցի փռչու տակ
 բռնել եր տգեղ մի պար,
 ազգային խորհրդից առած
 ջոջ մաուզերը
 հագին:

*
*
*

Դարերի մի պահանջ լուծվեց,
 Նաիրին մնաց կենդանի,—
 քուչան արևներ բարցեց,
 արևներ տոկուն, տիտանի:
 Թե ինչո՞ւ իրանցին յեկավ,
 ելի Նաիրի քուչան...
 Ավոն ետքան չիմացավ
 ինչո՞ւ կարմիրներ իջան...

Ու յերբ չարչիք զնացին
ու քուչան հանգիստ առավ,
մտածեց ծերացած Ավոն —
ինչո՞ւ իր վորդին մեռավ...

5. ԳԱՂԹԱԿԱՆ-ՄՇՈՒՅՆԵՐԻ ՄԱՐՈՆ

Ու Ավոն Նաիրի քուչում,
հնաշեն մի պատի տակին—
կծու բռնութիւն շնչում,
խոկում եր, նայում ճանքեքին:
Նորից են հին քուչան...

վորքան մոռացված Մարո,
ամուսնուն կանչել ե.—

«Յարո՛»,

կամ իր կորուցած մի տղին...
Ինչպես զեղեցիկ յերգեր,
հուսահատ լքված Մարոի,—
կը սիրեր խմբապետ վորդին
սրտի մեջ—որորի, որորի:
Յեւ որերն դուշման «Փալաքի»,
դառուցին անիվը ձախով,—
Ավոն դառավ թե ծեր,

թե «քյասիր»,

պատի տակ, արեին,—

մի մորթի փափախով:

Ու այսպես մինչև իրիկուն,
Ավոն կը նստեր արեին—
յերազով ու հազով կերթար տուն,
կը նայեր իր փոշոտ—

շորերին:

ՄԱՐՈՆ ԿԱՐՄԻՐ ՄՇՈՒՅՈՒՄ

Հազարամբոխ յերկիրը—քուչան,
ինչո՞ւ եր երեկ լալկան մի Մարո.
ինչո՞ւ փշոտ եր Նաիրին,
Հայաստանը «Արցունքի հովիտ».—

պոետը

դուլում աշխար եր յերգել—
Նաիրի դուլումն եր ծախում...

—Պատմական վոզի դո՛ւ,

այդ դու Մարո՛,

—պատմական կատակը դո՛ւ,

այդ դու Մարո՛,

—Նաիրի վերքը, յերգը դալաք

պոետի,

Դո՛ւ—

բոլորը դո՛ւ Մարո:

—Քանդված ոջախի վիշաք դո՛ւ,

այդ դու Մարո՛,

կողոպտված, լիկված ու հիմար,

դժու. —

խենթը դժու Մարո,

— Նախորդ յերկրի գաղթականը

դժու —

այդ դժու Մարո.

— Այսորի հաղթականը՝ դժու,

այսորը դժու —

Մարո:

Այդ դու, վոր հիմար,

վառելես ես Նախորդան քո հոգին,

կանգնել ես վիթխարի հասակով, —

այդ դժու, վոր ժպտուն ես,

արևն ե քո հագին,

արևը, Հոկտեմբերյան պսակով...

Մարոն թարմացած վոգի. —

կաշխատի կարմիր տրեստում,

անցածը չիք

չկան —

յերգերը դալլաք պոետի:

Քուչան ծիծաղ ե, ու վազք,

որերը՝

Մարոին պատմական բարեկամ —

որերը՝

նրան, դեպի հաղթականչ,

վերջին բարեկիցն ե

զլորում:

6. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ ՔՈՒՉԱՆ

Այդպես՝ աշխարհից աշխար,

քուչայում Նախորդ յերկրի —

ազգային կոնվր դարձավ,

դարձավ մի տղեղ առակ,

յերբ Հոկտեմբերը բորբ,

բերեց՝ —

Լենին,

P. K. II. - Են —

Լենին — հաղթանակ...

Նախորդ քուչան ուղեց,

չարչին ու հայդուկը խելառ

եկ իրան չը խափեն,

չը խափեն:

Արև ու ժխոր, փողոցում

այսոր աղմուկ,

մատուռի խելառ վազքը,

հազը Ավոի.

բանակի ռազմական յերթ,

հազար պատկոմներ կարմրադրոշ,

անթիվ աղմուկ թմբուկ,

ցրվող ավտոից՝ թռուցիկներ

բյուրթերթ:

Փողոց կամ քուչան հինորյա

Նախորդ,

դրել ե իր աչքերի բիբում

«Յունկերսը»,

ամպերը լազուրում կորորի:

Այսօր Նաիրյան կարմիր
մի առն —

այսօրը վաղը...

այսօր պատմութիւնը —

անիվել ենք

վոր պտտվի, պտտվի:

Գալիքների առավոտ,

արեաշաղ քուչայով,

կանցնեն Նաիրցիք նոր աշխարհի

զովին —

կանցնեն, յերգով են հիմա,

յերգը, վոր կազմէ մեքենան:

Հազար են ու բյուր,

կերթան գործարանը շարժեն —

հուզվեն,

հուզվեն հաղթանակներով,

վողջ հողագունդի վրան:

Դորդ աղմուկը,

ճոխը հաստապատ փոկերի —

պտույտված հազարանիվ

բողազով,

կորորեն մարմինը

պտույտում իրենց վաղքոտ հեքի,

բազուկները Գալոի, Հասանի, վռագով

կը շարժվեն. —

Գալոն անհոգ ե

«Արիաշայի գլանաբը»,

կամ հաղթական մի յերգ կը յերգի:

Անցած օրերի Ավոն,

թաղքեն պատմական պատվանիշ. —

կը ձգեր, կը ձգեր ու կերթար,

Նաիրի հսորվա քուչով...

Վոչինչ, հանգիստ եր է նա,

է լավ, ինչի փրկութիւնը,

հերիք ե բուռնութի ունենա...

Կանցներ շենքերի մոտով,

Նաիրյան այսօրի քուչի,

մերթ ընդ մերթ, դանդաղ կը կենար. —

կը կարգար՝

«Կինո Պրոլետար»

կը կարգար մի նոր հիմնարկ,

կը հիշեր, վոր Սերոբ ազան

այգտեղ եղեր ուներ,

ու մեծ եր, լեն մի բալ...

Ու պառավ անցած Ավոն

կափսոսար եղերի համար,

հիշելով Սերոբ աղին

կը ցավեր յերկան, յերկան...

Նորից ու նորից աներ

երեկվա մոխիրոտ քուչին, —

թանգարան, կինո, թատրոն


ու «բաղ»

հազար ազիտ պլակատ,

ու —

«պանդուկը» կարմիր,

պանդուկը ճամբի միջի,



վոր կուգեր խանութ շինել,—
ծախեր՝

գինի, արագ...

Ավոն կափսոսար կը ծխեր,
կը ծխեր «սավետակի» բուռնութիւն,
քուչեն նոր եր ու յերկար
փռչտար, փռչտար ու կերթար:
Ավոն դանդաղ բուռնութեւ

յերագում,

կը քայլի ամբոխի հոսանքով,
—նախիւ քուչան ամոխ՝ —

տոնում լինեն.—

Ավոն աչքերով կը կարդա

վոր իր գեմի այսորի նախիւն
պատմութիւնն է,—լենին,

լենին,

լենին...

—լենինը փողոցում

միլիոնամբոխ հուլի հետ,

լենինը «յունկերսից» Մարս գուցե,—

Մոսկով,

—յերկրագունդը՝ —

լենին,—

հաղթանակը նա,

—լենինը դրոշմած Ավոյի

«սավետակի» բուռնութեւ:

լենին...

լսել է Ավոն, նա ինչպես չիմանա—

լենինը, նախիւ սրտում:

7. ՍՄԻՉԿԱՆ

Գյուղերը շարան, շարան,

Նախիւն քուչի միջով,—

սալերը թողած հեռուն,

անցնող որերի մեջքին,—

գյուղերը վազում եյին

հպին արեւների աչքին:

Ամբոխը ռանչալար,

ամբոխը դազգյահներէց՝ —

աշխույժ, ուրախ ավյունով

սեղմում եր մազոլը մաճի,

սեղմում եր իր հարազատ

արյունով:

Յերկուսի պատմական խորհուրդից,

մոսկովուր բազուկների միջով —

կը վազեր հզոր մի տոկ,

լույսը սպասած գալիքի...

Մասիսը փայլուն լուսախաղ

ժպտում եր քուչաի դեմքին,

այրվում եր, փայլում անհոգ:

ու մեծ բազմամարդ քաղաքից

դեպի գյուղ —

Նախիւն լույսերի բանակից,

գնում եր վերջի տեխնիկան՝

անցնում եր —

Ռադյոն. . . .

8. ԳՈՒՉԱ՝ ԳԱՂԱԳ

Չարչին, փինաչին, չկան ել. — ուր անցան.
ինչո՞ւ հասեցին խոսքը, կտակը, —

վերջին.

ինչո՞ւ Նաիրից հեռացած,

անգույն փողեկներին միացան:

Ու հազար չարչի խանակց, —

այսօր քուչի մեջ

«բանկոպը» բաց ե

առավոտվա ութից, —

մինչև իջնե Նաիրյան յերեկոն . . .

Այսօր բոլորը գիտեն,

ինչպե՞ս Հասանը Իրանի, ու Հայաստանցի

Գալսն, —

առևտուր պիտի իմանան,

առևտուր կոպերատիվից

և այդպես պիտի գնան,

այսօրվա պատմական քուչից:

Ու Նաիրի փողոցում —

վոր կա ամբոխ, ու հաղթական

ցնձում,

անթիվ խանութներ բացին,

ուր պարզ զրած եր գռան,

«թող մանի բանվորն ու —

զյուզացին:

թերթերը ամեն ուր քուչայում,

մամուլը կարմիր աշխարհի, —

իր ազատ մարտական

հայելում,

բացում եր Հոկտեմբերը արի:

*
* *

Ավոն վորքան շուտ ծերացավ

մի քանի տարի միայն . . .

ցավում եր հիշում յերազով,

թե ինչո՞ւ ժամանակը անցավ:

Ինքը տեսել եր քուչում,

քուչում՝ Նաիրյան աշխարհի —

ուր «հնչյուն» են ծախում

գեղին,

հիշում եր, ատում . . .

Յեվ ինչ, հազար ել թող ատի,

չե վոր ինք ել եր «բիրթեիկ» դարձել

վոսկի եր ծախել — տեղին:

Հիմա չ'իք ե. —

Ավոի բիրթան ել չկան, —

առ քեզ իմ Հոկտեմբերյան

տիտան

բանվոր զյուզացի, —

խորհրդանիշ կայուն մի դրամ —

պարծեցի . . .

Սա գինն ե ձեր հաղթ մուսկուլի

լրիվ արժեքի քանակով. —

Եյ, Ավո ջան, մի նաիր,
մի նայիր՝ թեթե «կատակով»:
Որերը սիրուն են կյանքաբեր,
գինին — Նաիրյան հոգին,
թող հարբի բիրժան

խելագար,

թող ննջի արխիվի

գոբին:

9. ՓՈՂՈՑ—ԲԱՆԱԿ

Անցնում են նոր, ռազմական,
կարմիր բանակներ հզոր, —
գիտես վոր հազել են մի
անպարտ հաղթություն:
Բանակը շրջեղ մարզվում է այսօր,

«Դորբոխիմը» փռված

վորոշում վորպես հակաթույն...

Այսօր նորացած ավյունում,

արյունը Հոկտեմբերի սրտով,

մինչև Նաիրի քուչան. — բոլորին,

բոլորին է միանում . . .

Նրանց, վոր հոկտեմբեր են կառուցել,

Նրանց վոր պայքար մտան

բոլոր յերեք ֆրոնտում:

10. ԿԱՐՄԻՐ «ՊԱՆԴՈԿ»

Յերբ Հոկտեմբերը բերեց

Լենինը հաղթանակ, —

Լենին Ք. Կ. Մ.-են,

Նաիրի քուչան ուզեց վոր

չարչին ու հայդուկը խելառ,

իրանց չը խափեն, չը խափեն:

Ուզեցին Հասանը նորից

քայլե Նաիրի փողոցով,

ուզեցին Իրան տանի

ու՝ դառնա Հոկտեմբերի բոցով:

Ու ծիծաղոտ շարժումը հիմա,

հազարամբոխ գործարաններ

հաղթական,

հազարանուն հիմնարկներ

ծերիցը ծեր քուչի,

Հասանն ել նորից Նաիրի յեկավ, —

ելի «չայ ա չայ» կանչի:

Տխուր երեկվա փողոցում,

մեռած մթնապատ, ու անդուր, —

ապրում եր այսօր մնացած, —

ապրում եր հինորյա մի պանդոկ:

Պանդոկը այսօր Նաիրի քուչաի ծերին,

թող կարմիր ճաշարան նիշի ճակատով,

...կառքերը մոտեցող, —

քուչան կը վառվի

պանդոկը ազիտացյա,

մամուլը խրոխտ կաղծրկե,
այսոր Նաիրի քուչայում,
«կարմիր ճաշարան» կը պահվի:
Զայչի Հասանն ել կիմանա,
կը կարգա կամաչի.
չի կանչի ել. ինչո՞ւ . . .
«կարմիր ճաշարան» կա—
ել վոնց թե ինչո՞ւ . . .
Հասանը կը խնդա
հա հա հա,

— «Ջանըմ աշխարհը, աշխարա հիմի».
Հասանն ել թող տալի պապական
փեշակով,
— «ախ, թե Իրանը կարմրի»,
ինքն ել հողից վաստակի—
քրտինքով . . .
Յեվ ուր զվարթ ամբոխը կեռա,
ամբոխը վոր Նաիրի քուչան ցնցեց,—
որերից հետո, Հասանն ել
մազուլթոտ,

կարմիր սեղանի մոտ
նստած եր ծիծաղով:
Ուրախ եր, կը կարդար պատին
«մի տվեք նաչանց».—
զուլսը կը շարժեր, կը հիշեր,
թե որեր առաջ, կը կանչեր,—
ինքը կանչին եր գերի—

«չանց ա չանց
չանց, ա չանց . . . »:

11. ՏՈՆԱԿԱՆ ՄԻՏԻՆԳ

Իրիկուն՝,
կարմիր ելեկտրոլուս գիշեր,—
գիշերային կարմիր կինո,—
միտինգ՝ . . .
Կայրվի լույսերում մոխիրոտ
Նաիրի քուչան,

ելեկտրոկայանը
իւր այսորի մեջքին,
գեղեցիկ պարով ե հիմա,
ու հաղթական դարով,—
ջան . . .

— Այ խանչի ադա
քեֆլիտ ա վոնց ա հիմի,
— տեսե՛լ ես հալը խանիտ
Նաիրի կարմիր քուչում:
— Ե, դո՛ւ
վարժապետ,
ետ ի՞նչ ա ելել,
ետ դու խի յես փչում . . .
— Ե, վոնցա՞ լավա՞
եսորվա կարմիր քուչեն,
հ՞ը, այ տերտեր նեղանաա
վո՞չ
վոր ճանփեքի միջեն,
ժամառունը հանեցինք քո . . .

Ու լոռեցին խիզախ

կարմիր բաբոշի՝

թեթե կատակով կանցներ

քմծիծաղ ժպիտում,

կանցներ կարմիր թատրոն — միտինգի՝ . . .

Ուր բիբը Հասանի մագնիտ,

բեվեոված մի կետում,

վաղուց կսպասեր, — նախագահը զանգի:

Յեվ վորքան լոյսեր են հիմա,

լոյսեր բոլորի մտքի մեջ, —

այրվում ե նրանց, նորացած հոգին. —

իսկ միտինգն ու չա՛յը, —

Հասանի շփոթ գլխում:

Այրվում ե հինորյա քուչան,

մշուշվում մշուշվում անվերջ,

բոլորը ապրում են —

ու ապրում ե Հասանը կարմիր իրանով:

Ու դանդաղ լապտերների լոյսով,

Հասանը ու լոռեցին կերթաին

միտինգից,

յերկուսն ել նորանոր հաղթանակի

հուլյսով, —

կարմիր արևելքը կառկայծեր

անցնող տիտանների մտքից . . .

12. ՏՈՆԱԿԱՆ ՓՈՂՈՅԻՑ ԴԵՊԻ ՏՈՒՆ

Ու նորից, նորից դեպի տուն,

այս անգամ թեթե ժպիտով,

կը դառնար Ավոն քուչաից, —

ուրախ եր վոր իրան դռներին

հսկամբոխ մի լենին տեսավ,

ու ինքը նրան նայեց:

Լենինը ավեր գյուղերից,

այսոր շինարար ծիծաղով,

թողոտ Նաիրի քուչում

տոնում եր տիտանի

խաղով:

Ու նրան յերազ, հրաշք,

Նաիրու տունը այսոր. —

կյանքը հեքյաթ ուրախ,

քուչան հեքյաթ բոսոր:

Ավոն ամենորյա շարժվող փողոցում

դիտում եր ինչպես կ'յեռար Նաիրին,

և հոգնած ամենորյա պտույտից,

դառնում եր դեպի տուն, —

նորակառույց կյանքի մասին

մտածում . . .

Հիմա չըզիտի ել վշտանալ
վոր մշուշը ցրվեց յերկրի,
վոր քուչայով անցավ
հաղթական կարմիր մի կանալ,—
հոյսեր իր մեջքին—

կըրի:

Ավոն տեսավ վոր Նաիրյան քուչում,
եւ չեղավ ազդային մի շփոթ,
եւ վոչ խմբապետներ կային,
և վոչ մտուղներն եր հաշում:

Ու գրկից են խաղաղ
մահմադյան վորդիքը բոլոր,
ինչ կա, թող Մահմադ լինի
կամ թե քրիստոսը—Նաիրում,
յերկուսն եւ վոչինչ չը գիտեն,
մշուշվում, են հանգչում

ամեն ոք:

Այսորվա ռազմական յերգերի,
չինարար տաղերի միջից,
մըլում են, ու փթում,

ու փթում,

Հոկտեմբեր լոյսերի—

կանչից . . .

«—Բարի որ, յուրաշ բարեկամ իմ,
—սալամ, Նաիրի քուչան . . .

Նաիրին ե իմ յերկիրը,
յերկիրը իմ, Նաիրի քուչան:
—Քեզ բարե:

— Սալամ . . . »

Ու այսպես Ավոն՝
Ավոն անձայն խորհրդով,
գիտեր այդ որի

պատմությունը մեծ,—

իբր բուռնութեւ զութիով,
նա եւ Նաիրի քուչան,—
այսորվա Նաիրին սիրեց:

«ՆԱԻՐՅԱՆ ՄԵԿ ՈՐՎԱ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՎԵՐՋԱԽՈՍԷ. . .

Են վոր կարմիր եր լուսավազը,
են վոր Մոսկովը՝ Լենին եր—

Հոկտեմբեր.—

վորը՝
այսոր Նաիրի գերբըն ե
քուչում ու կա—

կարթացեք.—

դրել ե աղմկոտ ճակատին,
«պրոլետարներ բոլոր յերկրների, միացեք!»:



Ու այսօր, միլիոն կարմիր ամբոխ
փողոցի մշուշում միացած ռադյոին,
Նաիրից—

Նյույորկ, ու Պեքին կը թռչի:
Հաղթական հիմնը հրե,
կը կառչի յերկրներ Վզին,—
Վորպես պատմական զաւիթ,
Իբրեւ տիտանի
կարմիր,
մի մայակ . . .

1924 թ. Լոռի.



ՀՀ Ազգային գրադարան



NL0352899

47241

ԱՆՈՆՍ!

ՇՈՒՏՈՎ, ԼՈՒՅՍ և՛ ՏԵՄԵՐԻ

«ԳՈՒՏ ԼՈԹԻ» պոեմ.

Լաւյս և տետել «ԳԻՆԱՄՈ ՆՎԱԳ» գինը 15 կոպ.

ԳԻՆԸ ՀԱՏԱՎԱՋԱՌ

— 35 կոպ. —